# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

2.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ..... 4

3.ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ..... 5

*Տեղեկություններ ..... 6*

*Դպրոցի հիմնադրման պատմությունը ..... 6*

*Դպրոցի անձնակազմը՝ ..... 7*

4.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ..... 8

5.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ ..... 9

6.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ .... 10

7.ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ..... ***Error! Bookmark not defined.***

*8.ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ..... 12*

9.ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ..... 13

10.ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ..... 14

11.ԴՊՐՈՑ-ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԿԱՊԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ..... 16

12.ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ..... 17

13.ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՀԵՏ ..... 18

14.ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ..... 19

15.ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ..... 21

16.ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ..... 22

17.ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ..... 23

*Ուժեղ կողմերը ..... 23*

*Թույլ կողմերը ..... 24*

18.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 24

*Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները ..... 25*

19.ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ ..... 26

20.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ..... 27

21.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ,ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ.26

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը պետության հիմքն է: Նրա առաքելությունն ավելի մեծ է, քան կարելի է պատկերացնել: Դպրոցը պետք է լինի հենման կետ, որը կնպաստի երեխայի ինքնաբացահայտմանը, դրսևորմանն ու կայացմանը: Դպրոցի պատասխանատվությունն է կրթել անհատ, ով ներկայացնում է ընտանիք, սերունդ, համայնք, պետություն և հասարակություն: Այսինքն, կրթությունը անհատի, հասարակության և պետության ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը պահպանելու, հարստացնելու և սերունդներին փոխանցելու գործին: Այսինքն, կրթության գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Իսկ այս ամենի իրականացման համար դպրոցը պետք է ունենա նպաստավոր այնպիսի պայմաններ և հնարավորություններ, որոնք իսկապես կնպաստեն 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայող քաղաքացի ձևավորելու ազգանվեր գործին: Դպրոցի զարգացման ծրագիրն էլ քայլ առ քայլ, աստիճանական և կոնկրետ ուղղորդումներով պետք է նպաստի վերոնշյալ գաղափարախոսության իրականացմանը:

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի № 16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի զարգացման 2023–2028թթ. ծրագիրի հիմքում ընկած է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Լեզվի մասին» ՀՀ օրենքը, Կրթակարգ, «ՊՈԱԿ-ի մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ կրթության՝ մինչև 2030թվական զարգացման պետական ծրագրը» և Հանրակրթության պետական չափորոշիչը: Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում՝ ապահովելով դպրոցի 5 տարվա զարգացման տեսլականը: Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել դպրոցում առկա հիմնախնդիրները, մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները, սովորողների, ծնողների մոտեցումները, ինչպես նաև դպրոցի տեղանքի առանձնահատկությունները: Ծրագիրն ուղղված է դպրոցի աստիճանական զարգացման իրականացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը, որոնք ուղղակիորեն բխում են դպրոցի գործունեությունից և շահերից:

Զարգացման ծրագրի առանցքային բաղադրիչներն են ՝ իրավիճակի վերլուծությունը, դպրոցի առաքելության ներկայացումը, դպրոցի հիմնախնդիրների, առավելությունների ու թերությունների վերհանումն ու լուծումները, ծրագրի նպատակներն ու հիմնախնդիրները,

ինչպես նաև ծրագրի ռիսկերն ու ծրագրի իրագործման, գնահատման ու վերահսկողության ցուցիչները: Ծրագրում կարևորվել է նաև աշակերտ-ուսուցիչ-ընտանիք-համայնք պետություն ամուր և մշտական կապը, ինչպես նաև այդ առանցքի արդյունավետ և համակողմանի համագործակցության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ծրագիրն ուղղված է դպրոցի աստիճանական զարգացման իրականացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը, որոնք ուղղակիորեն բխելու են դպրոցի արդյունավետ գործունեությունից:

## 2.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

***Դպրոցը պետք է լինի յուրաքանչյուր սովորողինը, իսկ յուրաքանչյուր սովորող պետք է դառնա դպրոցինը, այսինքն պետք է դառնա կրթության, հետևաբար նաև դպրոց կառուցողն ու կերտողը:***

Դպրոցը, որպես կրթօջախ, պետք է իր հնարավորություններով հասանելի լինի յուրաքանչյուր երեխայի համար, պետք է հնարավորինս բավարարի յուրաքանչյուր սովորողի սովորելու իրավունքը, սովորելու կարիքն ու ձգտումները: Դպրոցում ուսուցման գործընթացը պետք է հավասարապես հասանելի լինի յուրաքանչյուրին:

Դպրոցը պետք է լինի այն շարժիչ ուժը, որով պետք է առաջնորդվի մի ամբողջ սերունդ և ոչ միայն առաջնորդվի , այլ դառնա առաջնորդ ու պետություն կերտող: Առավել քան երբևէ, առավել քան այսօր, դպրոցը պետք է դառնա յուրաքանչյուրի օջախը, որտեղ պետք է երեխան ապրի, և նրա ապրած այդ յուրաքանչյուր օրը պետք է դառնա զարգացած և հզոր պետության կերտման հիմնաքարը: Հասանելի լինել նշանակում է ունենալ հնարավորինս զինված ուսումնական հաստատություն, զինված արդի տեղեկատվական տեխնոլոգիաներով և առարկայական նյութատեխնիկական պաշարներով, զինված մրցողունակ, ժամանակի շնչով քայլող մանկավարժներով: Ահա այս դեպքում դպրոցը կարող է ոչ միայն ներգրավել սովորողներին, այլև իսկապես կրթել ու դաստիարակել մի սերունդ, որն իսկապես զինված կլինի ժամանակի պահանջներին համապատասխան կարողություններով ու հմտություններով: Հետևաբար, դպրոցը կապահովի ոչ միայն ժամանակի մարտահրավերներին դիմակայող, այլև մարտահրավերներ նետող կոմպետենտ սերունդ: Ժամանակակից աշխարհում ավանդական մեթոդներով հանրակրթություն իրականացնելը այլևս տեղին չէ, որովհետև յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր առաջնահերթությունները: Կրթությունն այն ճանապարհն է, որը հնարավորություն է ստեղծում անձի մեջ բացահայտելու նոր որակներ և կարողունակություններ: Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Ելնելով այդ առաջնահերթություններից ու խնդիրներից անհրաժեշտ է.

# 3.ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հաստատության անվանումը՝** «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՆՎԱՆ № 16 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**Հաստատության հասցեն՝** ՀՀ Լոռու մարզ,ք.Վանաձոր,Տարոն-4թաղամաս,Զեյթունի փողոց 5

**Հեռախոսահամար՝** 0322-6-19-81

Դպրոցի էլեկտրոնային հասցեն՝ http://vanadzor16.schoolsite.am/

- «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դ.Վարուժանի անվան №16 դպրոց» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական երկու՝ տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:
- Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):
- ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 08/09/2003թ, գրանցման թիվ՝ 222.210.00191
- Համաձայն 26.08.2021թ.-ի Մանկավարժական խորհրդի որոշմամբ 2021-2022 ուստարվանից դպրոցում իրականացվել է գերմաներենի՝ որպե երրորդ օտար լեզվի ուսուցում:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 2020 թ. սեպտեմբերի 24-ի թիվ 1292-Ա/2 հրամանով դպրոցին տրվել է կրթական գործունեության լիցենզիա՝
  - տարրականընդհանուր (1-ինաստիճան)- 405 տեղ
  - հիմնականընդհանուր (2-րդաստիճան)- 500 տեղ

## ***Տեղեկություններ***

Այս պահիբ դպրոցն ունի 18 դասասենյակ, առարկայական 6 կաբինետ /սմարթ, ռազմագիտության՝ զենքի պահոցով, տեխնոլոգիայի, շախմատի, օտար լեզվի, ռուսաց լեզվի/, գրադարան,2 լաբորատորիա, 2 մարզադահլիճ՝ մեկը վերանորոգված, 1 ուսուցչանոց, 16 սանհանգույց, որից գործում են 14-ը, վերանորոգված է 11 սանհանգույց, բուժկետ, ՏՄԱԿ-ի աշխատակիցների համար նախատեսված սենյակ, հոգեբանի սենյակ, ուսուցչի օգնականների սենյակ,նիստերի դահլիճ՝ վերանորոգված, 1 ճաշարան՝ վերանորոգված, 1 պահեստ ՝ նախատեսված սննդի համար,:

2023-2024 ուստարում դպրոցը համալրված է 18 դասարանով, որտեղ սովորում են թվով 499 աշակետներ.

- Տարրական դպրոցում՝ 8 դասարան - 218աշակերտ
- Միջին դպրոցում՝ 10 դասարան - 281աշակերտ

Դպրոցում իրականացվում է ներառական կրթություն: Ունենք ԿԱՊԿ 28սովորողներ՝ 2 ծանր, 3 միջինև 2 թեթև խանգարումներով:
Դպրոցն իրականացնում է «Դպրոցական տաք սնունդ» ծրագիրը, որից օգտվում են 218 սովորող:

## ***Դպրոցի հիմնադրման պատմությունը***

1993 թվականին հիմնադրվեց Համո Սահյանի անունը կրող թիվ 29 միջնակարգ դպրոցը: Շնորհիվ «Հայաստան» համահայկական հիմնադրամի, ֆրանսահայ բարերարներ երջանկահիշատակ Արթին Չինգիրյանի և Անդրանիկ Նուրյանի՝ 1996թ. կառուցվեց դպրոցի 2-րդ մասնաշենքը:

2003թ-ին Վանաձորի թիվ 16 և 29 միջնակարգ դպրոցները վերամիավորվեցին, և նախկին՝Համո Սահյանի անվամբ թիվ 29 միջնակարգ դպրոցը վերանվանվեց Դանիել Վարուժանի անունով՝ կրելով հերթական 16 համարը:

ԿԳ նախարարի 2010թ. հուլիսի 7-ի N769-Ա/Ք հրամանով դպրոցը դարձել է հիմնական:Նոր խմբագրությամբ դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Կառավարության 14.09.2017թ-ի 801–Ն որոշման հիման վրա և ՀՀ Լոռու մարզպետի 30.05.2022թ. 287–Ա որոշմամբ:

***Շեքային տվյալներ*** Դպրոցը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, Կրթության, Հանրակրթության և ՊՈԱԿ-ի մասին օրենքներով, դպրոցի Կանոնադրությամբ, Ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով:Դպրոցն իրականացնում է տարրական և հիմնական հանրակրթական ծրագրեր: Սահմանային թիվը տարրական դպրոցում 405 է, իսկ հիմնական դպրոցում՝ 500 (ընդհանուր՝ 500): Մեկ ուսուցչին ընկնող աշակերտի թիվը կազմում է 12:

Դպրոցի շենքը երկհարկանի է, շենքի տիպը՝ տիպարային։ Ունի ջեռուցման անհատական համակարգ։Չեն ջեռուցվում միջանցքները։
Դպրոցը ունի ընդհանուր 7950քմ տարածք։ Դպրոցն ունի կնիք։ Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը /կանոնակարգվող իրավական ակտերը, դպրոցի կանոնադրությունը, տեղայնացված օրինակելի իրավական ակտերը, ներքին իրավական ակտերը/։Դրանք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան :

## ***Դպրոցի անձնակազմը՝***

- ✓ **ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ**-տնօրեն 1,վարչատնտեսական համակարգող 1, տնօրենի տեղակալ 1, ՄԿԱ գծով համակարգող 1:

- ✓ **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ**

**ՈՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ 34՝**

- Տարակարգ ունեցող ուսուցիչներ 6
- Կամավոր ատեստավորված ուսուցիչներ 3
- Վերապատրաստում անցած ուսուցիչներ 34
- Վերապատրաստող ուսուցիչներ 2
- Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ 3
- Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ 34
- Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող 1
- Զինղեկ 1
- Հոգեբան 1
- Լաբորանտ 1
- Գրադարանավար/ուսուցիչ 1
- Ուսուցչի օգնական 3

- ✓ **ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ**
  - Հաշվապահ 1
  - Անձնակազմի կառավարման մասնագետ/ուսուցիչ 1
  - Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ/ուսուցիչ 1
  - Խոհարար 4
  - Հավաքարար 4
  - Պահակ 4

Դպրոցն աշխատում է միահերթ, 5-օրյա աշխատանքային շաբաթով:

# 4.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ժամանակակից աշխարհում ավանդական մեթոդներով հանրակրթություն իրականացնելը այլևս տեղին չէ, որովհետև յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր առաջնահերթությունները: Կրթությունն այն ճանապարհն է, որը հնարավորություն է ստեղծում անձի մեջ բացահայտելու նոր որակներ և կարողություններ: Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ նպատակներ և խնդիրներ: Ելնելով այդ առաջնահերթություններից ու խնդիրներից անհրաժեշտ է.

| *ՆՊԱՏԱԿՆԵՐ* | *ԽՆԴԻՐՆԵՐ* |
|---|---|
| Դպրոցում ձևավորել ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործ կրթական միջավայր, որի արդյունքում յուրաքանչյուր սովորող կունենա հավասար կրթական հնարավորություններ՝ անկախ իր ընդունակություններից ու կարողություններից: | Ունենալ պատրաստված մանկավարժահոգեբանական թիմ՝ պատրաստ նպատակային համագործակցության, պատրաստ ցանկացած իրավիճակի արդյունավետ լուծման: |
| Ստեղծել բարոյահոգեբանական հարմարավետ միջավայր յուրաքանչյուր սովորողի համար, որպեսզի սովորողը կարողանա դրսևորել իր կարողություններն առավելագույն ձևով: | Մանկավարժական կոլեկտիվի կողմից ցուցաբերել անհատական մոտեցում և աշխատանք յուրաքանչյուր սովորողի հետ, ըստ համապատասխան կարիքների: |
| Կրթության մեջ կարևորել ոչ միայն գիտելիքը, այլևկարողունակությունները՝կոմպետենցիաները, որը այսուհետ պարտադիր է Հանրակրթության պետական չափորոշչով: | Կազմակերպել քննարկումներ, վերլուծություններ,տալ գնահատականներ: Ունենալ ակտիվ մասնակցություն ոչ միայն առարկայական օլիմպիադաներին, մրցույթներին և առաջնություններին, այլև ապահովել ակտիվ մասնակցություն միջազգային կրթական միջոցառումներին: |
| SS կիրառումը ը դարձնել ամենօրյա կրթության մաս | Դպրոցն ապահովել համակարգիչներով և այլ անհրաժեշտ տեխնոլոգիաներով: |
| Ուսուցիչը լինի անսպառ գիտելիքներով օժտված, շարունակաբար գիտելիքներով և կարողունակություններով զինվելու պատրաստ, հոգատար, սրտացավ և հանդուրժող: | Առցանց և առկա վերապատրաստումներին ընդգրկել ուսուցիչներին և ձեռք բերված գիտելիքները փոխանցել աշխատանքային թիմին: |
| Կրթական բոլոր աստիճաններում ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը: | Համակարգված աշխատանք տանել դպրոցի մասնագիտական թիմի, ՏՄԱԿ-ի աշխատակիցների հետ: |
| Կրթել և դաստիարակել սերունդ՝ ժամանակի պահանջներին համապատասխան՝ նպաստելով ապագայի մարտահրավերներին դիմակայելու և | Մշտական համագործակցություն ապահովել կրթություն կազմակերպող և իրականացնող բոլոր կառույցների հետ: |

| | |
|---|---|
| պայքարելու պատրաստ անձի և հասարակության ձևավորմանը: | |
| Կարևորել լեզուների ուսուցումը | |
| Դպրոցում սովորողն իրեն պետք է զգա ապահով, ջերմ միջավայրում: | Վերահսկելի դարձնել յուրաքանչյուր օղակի աշխատանքը, պահպանել հաշվետվողականությունը և աշխատանքի թափանցիկությունը: |
| Աչքի ընկնել որպես նորարար և առաջադեմ դպրոց համայնքում | Յուրաքանչյուր աշխատակցի որակյալ և պատասխամատու աշխատանքով ապահովել դպրոցի հեղինակությունը: |
| Լինել ճկուն և մասնակցային, բաց լինել բոլոր քննարկումների համար: | Բոլորի ասելիքը լսելի դարձնել և մասնակցային որոշումներ կայացնել: |
| Նպաստել առողջ ապրելակերպի իրականացմանը: | Ունենալ կահավորված մարզադահլիճ, բացօթյա խաղահրապարակ: |

# 5.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ուսումնական միջավայրը կրթության կարևորագուն բաղադրիչներից մեկն է, որը նպաստում է ոչ միայն կրթության որակի բարձրացմանը , այլև սովորողի առողջության պահպանմանը և ֆիզիկական զարգացմանը:

| *ՈՒԺԵՂ ԿՈՂՄ* | *ԹՈՒՅԼ ԿՈՂՄ* |
|---|---|
| Դպրոցի շենքը և տարածքն ընդարձակ է:<br><br>Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում, անհատական ջեռուցում:<br><br>Դպրոցի սանհանգույցները որոշակի վերանորոգված են :<br><br>Առկա են թվով 30 համակարգիչներ, ինտերնետ կապ, պրոյեկտորներ, սմարթ դասասենյակ:<br><br>Դպրոցն ունի բնագիտական առարկաների /քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա/ լաբորատորիա:<br><br>Գրադարանը ապահովված է դասագրքերով, գեղարվեստական, մեթոդական և ծրագրային գրակա-նությամբ, ինչպես նաև համակրգիչներով:<br><br>Դպրոցի երկու մուտքերի մոտ կան թեքահարթակներ ԿԱՊԿ երեխաների համար:<br><br>Առկա են 2 մարզադահլիճ: | Միջանցքներն ու դասասենյակները լիովին վերանորոգված և կահավորված չեն:<br><br>Դպրոցի միջանցքները չեն ջեռուցվում:<br><br>14 սանհանգույցներից վերանորոգման կարիք ունեն:<br><br>Անհրաժեշտ է համակարգիչներով համալրել նաև դասասենյակները, ինչպես նաև աշխատանքային մյուս սենյակները:<br><br>Լաբորատորիաները կահավորված չեն և չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին:<br><br>Պետք է ապահովել ինտերնետի առկայությունը դպրոցի ամբողջ տարածքում<br><br>ԿԱՊԿ երեխաների համար դպրոցի միայն առաջին հարկում կան թեքահարթակներ, անհրաժեշտ հարմարեցումները բացակայում են:<br>8.Մարզադահլիճներից վերանորոգված է մեկը: |

| | |
|---|---|
| Ճաշարանը վերանորոգված է: | Բացակայում է անհրաժեշտ մարզագույքը: Բացակայում է բացօթյա խաղահրապարակը:<br><br>9. Դասասենյակները լուսավորվում են հին և ոչ խնայողական լույսերով: |

# 6.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

| ՆՊԱՏԱԿ | |
|---|---|
| ● *Շփումների, համագործակցության և փոխհարաբերությունների միջոցով նոր մշակույթի ձևավորում*<br>● *Փորձի, գիտելիքների, նոր հմտությունների ու կարողությունների ձեռքբերում*<br>● *Հոգատարվերաբերմունքի ձևավորում համայնքի, շրջակամիջավայրինկատմամբ*<br>● *Դպրոց-մշակութայինօջախկապի խթանում՝նպաստելովաշակերտների գեղագիտական դաստիարակությանը*<br>● *Սովորողների մոտ դաստիարակել կամավորու թյուն, առաջնորդություն,մասնակցային արժեքներ:* | |
| *ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ* | *ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ* |
| Դպրոցն ակտիվորեն համագործակցում է համայնքային կառուցների, վերջիններիս կազմակերպած հասարակական, մշակութային և կրթական միջոցառումներին:<br><br>Համագործակցում է Քոաֆ Սմարթ կենտրոնի, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի, «Դեկարտ»գեղագիտական կենտրոնի, E-school-ի, «ՆորԱրար» հկ-ի հետ:<br><br>Ակտիվորեն կիրառում է պետության կողմից տրամադրած դպրոցական աբոնենտային համակարգը: | Գտնվում է քաղաքի ծայրամասում, ինչը դժվարացնում է առավել ակտիվ շփումները:<br><br>Բացակայում է համագործակցությունը հարևան և այլ ուսումնական հաստատությունների հետ:<br><br>Երեխաների ակտիվությունն այդքան էլ բարձր չի մշակութային միջոցառումներին մասնակցելու ուղղությամբ: |

| | |
|---|---|
| Համագործակցում է նաև Փրկարար ծառայության, ոստիկանության և ՀՀ ՊՆ զորամասերի հետ: | |

## 7.ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներդպրոցական վերահսկողությունը ուսումնադաստիարակչական գործընթացի վերլուծությունն է,որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում վերացնելու անճշտությունները և շտկելու թերությունները: Բոլոր ուսուցիչներն ունենան առարկայական թեմատիկ պլաններ, դասի ներկայանան օրվա դասի պլանով, կատարեն փոխադարձ դասալսումներ:

| ՆՊԱՏԱԿԸ | |
|---|---|
| ● *Ուսումնադաստիարակչական վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվության տիրապետում*<br>● *Ուսումնադաստիարակչական գորրծընթացի մշտական վերլուծություն*<br>● *Ուսումնադաստիարակչական գործընթացում անճշտությունների վերացում և թերությունների շտկում*<br>● *Ուսումնական գործընթացում աշակերտների ընդգրկվածության մակարդակի ուսումնասիրում*<br>● *Ուսուցիչների համակողմանի գործունեության վերահսկում*<br>● *Դպրոցական փաստաթղթերի մատենավարության վերահսկողություն*<br>● *Հաշվետվությունների մշտադիտարկումներ* | |
| *ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ* | *ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ* |
| Տարեսկզբի մանկխորհի կողմից քննարկվում, ապա տնօրենի կողմից հաստատվում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի գործածությունը /ուսպլան, դպրոցի ուսունադաստիարակչական աշխատանքների պլան, տնօրենի տեղակալի, ՄԿԱԳ համակարգողի,ԴԱՀ-ի,մեթոդմիավոր-ման նախագահների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, դասղեկների, ԱՈՒՊ-ներ, ինչպես նաև ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները:<br><br>Յուրաքանչյուր կիսամյակի վերջին գործող օղակները ներկայացնում են հաշվետվութ-յուններ:<br><br>Տնօրենության կողմից տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ, կազմակերպվում են դասալսումներ: | Փողադարձ դասալսումները պասիվ են:<br><br>Ուսուցիչների մոտ փորձի փոխանակումները մշտական և համակարգված չեն:<br><br>Ուսուցիչների մեծամասնության մոտ տարակարգի կամ կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկությունը բա-ցակայում է:<br><br>Դպրոցի աշխատողների խրախուսման մեխանիզմները բացակայում են:<br><br>Ուսուցիչների և սովորողների խրախուսման նպատակով ֆինանասական միջոցները չեն բավականացնում: |

| | |
|---|---|
| Դպրոցում ակտիվորեն գործում է ուսուցիչների հերթապահություն։<br><br>Դասղեկական ժամերին քննարկվում են բազմաբնույթ թեմաներ։<br><br>ԿԱՊԿ սովորողների հետ համակարգված աշխատանքներ են տարվում։ | ԿԱՊԿ սովորողների համար հարմարե-ցումների, դիդակտիկ պարագաները դեռևս բավարար չեն։ |

## ***8.Դպրոցի տնօրենի գործունեության հիմնական սկզբունքները***

Բացի այն, որ դպրոցի տնօրենը պիտի օրինակ լինի սովորողների և մանկավարժական անձնակազմի համար իր անձնական օրինակով, նաև կան որոշակի սկզբունքներ, որոնց նա պետք է տիրապետի իր գործունեության արդյունավետ կազմակերպման համար։ Հանրակրթություն իրականացնելիս դպրոցի տնօրենը անվերապահորեն պետք է դրևորի հետևյալ հատկանիշները և սկզբունքները՝

- Պատասխանատվության բարձր զգացում և հետևողականություն
- Հարգալից վերաբերմունք յուրաքանչյուրի նկատմամբ
- Արդարամտություն
- Համագործակցության պատրաստակամություն
- Ցանկացած իրավիճակում գործունեության ճկունություն
- Ստեղծագործական մտածողություն
- Անձնակազմի գործունեության խրախուսում /պաշտոնական աճ, մասնագիտական վերապատրաստումներ, տարակարգի ստացում, կամավոր ատեստավորում, մասնագիտական և կազմակերպական խրախուսում, այդ թվում՝ «Դպրոցի լավագույն ուսուցիչ», «Դպրոցի լավագույն դասղեկ» և այլ անվանակարգերի սահմանում/։
- Ուլորտի լավագույն մասնագետների հետ փորձի փոխանակման և վերապատրաստան միջոցառումների իրականացում։
- Մանկավարժական անձնակազմի պարբերաբար վերապատրաստում
- Կադրերի համալրում՝ ելնելով անձնակազմի երիտասարդացման օբյեկտիվ անհրաժեշտությունից։
- Սահմանված կարգով մանկավարժական անձնակազմի ատեստավորում։
- Մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրությունների իրականացում ՝ տարեկան կտրվածքով։

Իհարկե անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ անձնակազմի կառավարման գործընթացների արդյունավետությունը բացառապես պայմանավորված չէ դպրոցի միայն տնօրենի վարած քաղաքականությամբ։ Այնուհանդերձ, տնօրենի կողմից անհրաժեշտ է

հետևողական քայլեր ձեռնարկել անձնակազմի կառավարման գործընթացները առավել բարելավելու ուղղությամբ, ինչը ենթադրում է վերոնշյալ միջոցառումների իրականացում:

Վերը նշված բոլոր կետերը փոխկապակցված են և լրացնում են միմյանց, և որևէ ուղղությամբ միջոցառումների բացակայությունը կարող է վնասել՝ շղթայաբար կապակցված այս միջոցառումների արդյունավետությանը:

## 9.ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

| ՆՊԱՏԱԿՆԵՐ | |
|---|---|
| ● *Աշխատողների և սովորողների առողջության պատշաճ պահպանում*<br>● *Դասասենյակների, սպորտդահլիճի, սանհանգույցների վերանորոգում*<br>● *ԿԱՊԿ սովորողների համար պայմանների ապահովում*<br>● *Ուսուցիչների մասնագիտական կատարելագործում*<br>● *Ուսումնական արդյունավետ գործընթացի ապահովում*<br>● *Դաստիրակչական արդյունավետ համակողմանի աշխատանքների իրականացում*<br>● *Մշակութային վերափոխումներ*<br>● *Մաքսիմալ ուշադրության տրամադրում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված սովորողների, կտրուկ վարքային փոփոխության ենթարկված երեխաների նկատմամբ:* | |
| *ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ* | *ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ* |
| Դպրոցի դասասենյակները ընդարձակ են և լուսավոր:Սանհանգույցների մեծ մասը վերանորոգված են:<br><br>ԿԱՊԿ սովորողների համար կան առանձնացված սենյակներ, որոշակի դիդակտիկ պարագաներ:<br><br>Ուսուցիչները ակտիվորեն մասնակցում են նախատեսված վերապատրաստումներին, դասընթացներին և այլ սեմինարների ու քննարկումների:<br><br>Հանրակրթական պետական նոր չափորոշիչների իրականացման նպատակով գրեթե բոլոր ուսուցիչները վերապատրաստվել են:<br><br>Դպրոցը համալրված է որոշակի համակարգիչներով և այլ տեղեկատվական տեխնի-կայով, ունի սմարթ դասասենյակ, գրադարանում տեղադրված են համակարգիչներ: | Դասենյակների մեծ մասը վերանորոգված չեն, կարիք ունեն համապատասխան գույքի:<br><br>Դպրոցում չկան անհրաժեշտ հարմարեցումներ /թեքահարթակներ, հենաշարժողական հարմարեցումներ/:<br><br>Գործնականորեն թույլ է ուսուցիչների փորձի փոխանակությունը այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ:<br><br>2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում նոր չափորոշիչների կիրառման ժամանակ դեռևս դժվարություններ են առաջ գալիս դասագրքերի և մեթոդական այլ գրականության բացակայության պատճառով:<br><br>Դեռևս համակարգիչների թիվը բավարար չեն ուսուցիչների և աշակերտների մինիմալ պահանջների բավարարման համար: |

| | |
|---|---|
| ՄԿԱԳ համակարգողի, ԴԱՀ-ի,տարբեր ուսուցիչների, ինչպես նաև դասղեկների կողմից մշտապես կազմակերպվում են այցելություններ, հանդիպումներ և մշակութայի այլ միջոցառումներ։<br><br>Դպրոցի մեկ մարզադահլիճը վերանորոգված է, ինչը նպաստում է արդյունավետ ֆիզկուլտուրայի դասեր իրականացնելուն։ | Միջպրոցական շփումները թույլ են, ինչի հետևանքով աշակերտները այլ դպրոցների աշակերտների հետ գրեթե շփումներ, փորձի փոխանակում, ինչու չէ նաև մշակութային արժեքների փոխանակումներ տեղի չեն ունենում։<br><br>Դպրոցում կա ևս մեկ, բայց չվերանորոգված մարզադահլիճ։ Մեկ մարզադահլիճը բավական չէ,ուստի ֆիզկուլտուրայի դասերը հաճախ զուգադիպում են։ Իհարկե տաք եղանակներին ֆիզկուլտուրայի որոշ դասաժամեր դրսում են անցկացվում, ու թեև դպրոցի բակն ընդարձակ է,բայց դրսում էլ դպրոցը չունի բացօթյա խաղահրապարակ։ |

# 10.ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

| ՆՊԱՏԱԿԸ | |
|---|---|
| ● *Դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում*<br>● *Ռազմահայրենասիրության, մարդասիրության արժեքների առավելագույնս սերմանում*<br>● *Մայրենի լեզվի, մշակույթի և ազգային արժեքների պահպանում և փոխանցում*<br>● *Ազգային և համամարդկային արժեքների արդյունավետ համադրում*<br>● *Սովորողների մոտ տարբեր իրավիճակներում ճիշտ և արագ կողմնորոշվելու ընդունակությունների զարգացում*<br>● *Դժվար դաստիարակվող երեխաների հետ համակարգված և բազմակողմանի աշխատանքների իրականացում:* | |
| *ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ* | *ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ* |
| Դպրոցում ուսուցիչ-աշակերտ,աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունները լավ են։<br><br>Մշտապես իրագործվում են դասղեկի ժամեր և այլ միջոցառումներ, որոնց ընթացքում մշտապես շեշտադրվում են այդ փոխհարաբերությունների նհրաժեշտությունն ու կարևորությունը։<br><br>Դպրոցում կազմակերպվում են ռազմահայրենասիրական հանդիպումներ, միջոցառումներ, զրույցներ, ֆիլմերի դիտում։ | Դպրոցում թույլ են ծնողների ներգրավվածությունը, դպրոց-ուսուցիչ փոխհարաբերությունները։<br><br>Դեռևս բարձր մակարդակի վրա չեն մեկը մյուսին լսելու, միմյանց կարծիքները հաշվի առնելու կարողությունները։<br><br>Այսօրվա պայմաններում դեռևս քիչ են այն միջոցառումները, որոնք հնարավորինս կբարձրացնեն հայրենասիրական տրամադրությունները, որոնք հնարավորինս կնպաստեն մեր ժողովրդի պատմության ճիշտ ընկալումն ու պատմական սխալների գիտակցումը։ |

## Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

1.Ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումն ու տարածումը։

2.Մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտել առկա խնդիրներն ու բացթողումները, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ։

3.Անհրաժեշտ է համագործակցել հոգեբանամանկավարժական վերապատրաստում իրականացնող մարմինների հետ, որի գործունեության արդյունքում կբարելավվեն և կամրապնդվեն մանկավարժ-ԿԱՊԿՈՒ աշակերտ, աշակերտ-ԿԱՊԿՈՒ աշակերտ փոխհարաբերությունները,ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ։

4.Բոլոր աշխատանքները պետք է նպատակաուղղված լինեն սովորողի մոտ արժեհամակարգի ձևավորմանը, որի արդյունքում նա կլինի ազգային արժեքների կրողը, պահպանողը և փոխանցողը։

## ***Հայրենասիրական դաստիարակություն***

Հայրենասիրական դաստիարակությունը հանրակրթության անբաժանելի մասն է։ Ցանկացած սովորող դպրոցից պետք է դուրս գա իբրև քաղաքացի, ով գիտակցում է իր տեղն ու դերը պետության կայացման գործում, իսկ այդ գիտակցմանը մարդը հասնում է , երբ ծանոթանում է իր պատմությանը, գրականությանը, մշակույթին։Դառնում է դրա կրողը և հստակ գիտի ազգային արժեքների նպատակային պահպանման և տարածման անհրաժեշտության մասին։ Սկսած տարրական դասարաններից՝ երեխան պիտի ծանոթ լինի ՀՀ դրոշին, զինանշանին, պետք է անգիր իմանա օրհներգը։ Պետք է իմանա մեր երկրի պետականության կայացման գործում եկեղեցու և բանակի կարևորության մասին, պետք է տիրապետի հայոց լեզվին, իսկ արդեն դպրոցի ավագ օղակում աշխատի խոսել գրական հայերենով։ Դպրոցը պետք է ձևավորի քաղաքացի, ով հարգանք և ակնածանք կդրսևորի սեփական ազգի, պետության նկատմամբ և կկարողանա հասարակական, պետական շահը գերադասել անձնական շահից։

# 11.ԴՊՐՈՑ-ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԿԱՊԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Դպրոցի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար կարևոր նշանակություն ունեն խորհրդակցական մարմինների հետ մշտական և համակարգված փոխհարաբերությունները: Այդ փոխհարաբերությունները պետք է լինեն փոխկապակցված՝ առանց որևէ մարմնի տարանջատման:

| ՆՊԱՏԱԿՆԵՐ | |
|---|---|
| ● *Մասնակցային , թիմային կանոնակարգված և արդյունավետ համագործակցության ապահովում*<br>● *Խորհրդակցական մարմինների միջև մշտական և հետևողական աշխատանքների իրականացում*<br>● *Խորհրդակցական մարմինների արդյունավետության և դերի բարձրացում* | |
| *ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ* | *ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ* |
| Դպրոցի խորհրդակացական մարմինները | Դեռևս թույլ է խորհրդակցական մարմինների |

| | |
|---|---|
| գործում են դպրոցի կանոնադրության և սահմանված կարգին համապատասխան:<br><br>Դպրոցի տնօրենությունը մշտապես օժանդակում և խթանում է աշխորհրդի և ծնողխորհրդի նախաձեռնությունները՝ նպաստելով սովորողների ինքնուրույն որոշումների կայացման, ինչպես նաև նախաձեռնողական գործունեությանը: | միջև ոչ միայն մշտական փոխհարաբերությունները, այլև մասնակցային, թիմային աշխատանքները:<br><br>Ե՛վ ծնողները, և՛ սովորողները, դեռևս այդքան էլ ակտիվ ինքնուրույն և նախաձեռնող չեն:<br><br>Դպրոցում չկա աշխորհրդի գործունեության, աշխատանքների համար նախատեսված անկյուն: |

## 12.ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակության գործընթացը պահանջում է ընտանիքի անմիջական մասնակցություն և դպրոցի հետ շարունակական համագործակցություն: Առանց համագործակցության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը:

| ՆՊԱՏԱԿԸ | |
|---|---|
| ***•Ծնողների պատասխանատվության բարձրացում՝ մասնակցային գործունեություն ծավալելու նպատակով :***<br>***•Ընտանիք – դպրոց փոխադարձ վստահության բարձրացում***<br>***•Ծնողների առավելագույնս ներգրավում դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացներում*** | |
| ***ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ*** | ***ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*** |
| Մշտապես ծնողների հետ աշխատանք է տարվում համապատասխան մասնագետների կողմից/ՄԿԱԳ համակարգող, ԴԱՀ, սոցմանկավարժ, հոգեբան,ուսուցիչ, ուսուցչի օգնականներ՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն:<br><br>Համապատասխան աշխատակիցների կողմից մշտապես ճշգրտվում են նյութապես անապահով սովորողների, ծնողազուրկների, հաշմանդամ ծնողներ ունեցողների, միայնակ մոր խնամքի տակ մնացած սովորողների թվերը:<br><br>Դասղեկները, ուսուցչի օգնականները, ինչպես նաև սոցմանկավարժը պարբերաբար տնայցեր են կազմակերպում և ծանոթանում կամ | Դպրոցում շատ են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները:<br><br>Անչափ դժվար է աշխատանքը սոցիալապես անապահով, ծնողազուրկ երեխաների ընտանիքների հետ, քանի որ վերջիններս սոցիալական խնդիրների պատճառով երկրորդական պլան են մղում ուսուցման գործընթացը: Դպրոցում կան սովորողներ, ովքեր դասերից հետո աշխատում են:<br><br>Թույլ է ծնողխորհրդի կապը մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ: |

| | |
|---|---|
| տեղեկություններ են հավաքում ընտանիքի փաստացի վիճակի մասին: | |

## 13.ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՀԵՏ

Մանկավարժի կերպարը դպրոցում ունի առանցքային նշանակություն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր և հարաբերությունների մակարդակ, որտեղ մանկավարժն իրեն կզգա արժևորված և գնահատված, և այդ գիտակցումը մանկավարժին կմղի անձնային և մասնագիտական շարունակական աճի:

| ՆՊԱՏԱԿԸ | |
|---|---|
| ●*Յուրաքանչյուր մանկավարժի համար հարմարավետ ստեղծագործական միջավայրի ապահովում*<br>●*Ուսուցիչների մասնագիտական աճի խթանում/ վերապատրաստումներին, սեմինարներին, կրթական ֆորումներին մասնակցության ապահովում/*<br>●*Մանկավարժների խրախուսում՝ ստեղծագործական գործունեության, հետազոտական աշխատանքներ կատարելու և այլ առաջավոր և նորարարական գործունեության համար*<br>●*Առաջավոր մանկավարժական փորձի տարածում և վերլուծություն*<br>●*Ուսուցիչների միջև համագործակցության կատարելագործմանը նպաստող գործողությունների շարունակաբար իրականացում*<br>●*Տարակարգերի ձեռքբերման և կամավոր ատեստավորման մասնակցության խրախուսում* | |
| *ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ* | *ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ* |
| Դպրոցն ունի բարենպաստ պայմաններ ուսուցիչների կողմից ստեղծագործ գործունեություն ծավալելու համար:<br><br>Դպրոցում կան 1-ին տարակարգ ունեցող թվով 5 ուսուցիչներ,կամավոր ատեստավորումը հաղթահարած թվով 3 ուսուցիչներ: Դպրոցն ունի E-schoolsi կողմից վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ:<br><br>Ուսուցիչներից ընդգրկված են «Անգլախոս գյուղական համայնքներ» ծրագրի մեջ:Դպրոցի թվով 3 ուսուցիչներ հեռավար դասընթացներ են իրականացնում գյուղական շրջանների սովորողների համար: | Տեղեկատվական տեխնոլոգիաները բավարար չեն բոլոր դասասենյակներում համակարգչային դասապրոցես իրականացնելու համար:<br><br>Ուսուցիչների մեծ մասը չի ձգտում տարակարգ ձեռք բերելու կամ կամավոր ատեստավորման:<br><br>Առաջադեմ ուսուցիչները չեն խրախուսվում, խրախուսման համար մեխանիզմներն ու հնարավորությունները սակավ են: |

**Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝**

1.Ուսուցիչների հետ աշխատանքում առավել շեշտադրել դասավանդման նոր մեթոդների կիրառումը

2.Կրթվելու և ինքնակրթվելու ցանկության առկայություն

3.Շարունակաբար իրականացնել ուսուցիչների միջև համագործակցության մթնոլորտի կատարելագործմանը նպաստող գործողություններ

4.Անընդհատ մոնիթորինգի ենթարկել դպրոցի տնօրենի տեղակալների կողմից դպրոցի մանկավարժների հետ տարվող անհատական աշխատանքների որակն ու սահմանված սկզբունքների համապատասխանությունը

5.Մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և գնահատել օբյեկտիվորեն մեթոդական միավորումների զարգացման ծրագրում նշված նպատակների իրագործմանն ուղղված աշխատանքները

6.Փորձի փոխանակում պարբերաբար անցկացվող դասալսումների միջոցով

7.Ցանկացած վերապատրաստումից, սեմինարից, կոնֆերանսից, դասընթացից հետո, դրան մասնակցած ուսուցիչը, անպայման մանկավարժական աշխատակազմին պետք է ներկայացնի իր իմացածը սեմինար քննարկումի միջոցով

8.Մանկավարժների համար դպրոցում ստեղծել տեղեկատվության մի համակարգ,որը հնարավորություն կտա մշտապես համալրել գիտելիքները հետևյալ ուղղություններով՝

ա/դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ
բ/հոգեբանություն և մանկավարժություն
գ/ժամանակակից մանկավարժական նվաճումներ
դ/առաջավոր մանկավարժական փորձ

## 14.ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

2011թ.-ի մայիսի 17-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 571-Ն հրամանով հաստատված աշակերտական խորհրդի կանոնների համաձայն դպրոցում յուրաքանչյուր ուսումնական տարում ձևավորում է աշակերտական ինքնավարության մարմին: Աշակերտական խորհրդի գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի ոչ թե մի խումբ սովորողների կողմից մյուսների հանդեպ իշխանության չարաշահմանը, այլ քաղաքացիական հասարակության ձևավորմանը, որտեղ կլինի առողջ մթնոլորտ և կկարևորվի յուրաքանչյուր սովորողի դերը դրա կայացման գործում:

ՆՊԱՏԱԿԸ

- *Սովորողների ինքնուրույնության և ինքնավարության հմտությունների զարգացում*
- *Մեփական կարծիքների ձևավորում և արտահայտում*
- *Արդյունավետ հանագործակցության ապահովում մյուս մարմինների հետ*

| ● *Սովորողների շրջանում խնդիրների վերհանում* | |
|---|---|
| ***ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ*** | ***ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*** |
| Սովորողները ակտիվորեն մասնակցում են աշակերտական խորհրդի ընտրություններին։<br><br>Աշակերտական խորհրդի նախագահը կարողանում է հանդես գալ որոշակի առաջարկություններով։<br><br>Բավականին ոգևորությամբ են մասնակցում ոչ միայն դպրոցական, այլև արտադպրոցական նախագծերին ու միջոցառումներին | Աշակերտական խորհուրդը դեռևս պասիվ է առաջարկությունների,քննարկումների առումով։<br><br>Առաջարկությունները ոչ այնքան համամիտ են աշակերտական խնդիրներին։<br><br>Թույլ է համագործակցությունը ոչ միայն ուսուցիչների, այլև մյուս խորհրդակցական մարմինների հետ։<br><br>Բացակայում են միջդպրոցական միջոցառումները, մրցույթներն ու հանդիպումները։<br><br>Սովորողներն այդքան էլ ինքնուրույն և նախաձեռնող չեն։ |

**ԱԿՆԿԱԼՎՈՒՄ Է, ՈՐ՝**

1. Կպահպանվեն հին ավանդույթները և կձևավորվեն նորերը
2. Կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ, որոնք կնպաստեն սովորողների ինքնուրույնությանը
3. Կբարձրանա կարգապահությունը և մանկավարժական կոլեկտիվի պատասխանատվությունը
4. Սովորողները ձեռք կբերեն կյանքի հմտություններ
5. Կբարձրանա դպրոցի դերը

# 15.ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

| ՆՊԱՏԱԿԸ | |
|---|---|
| ***Սովորողների մոտ ոչ միայն դասապրոցեսում, այլև առօրյա կյանքում նորարարությունների և կրթական այլ տեխնոլոգիաների ու ՏՀՏ կիրառումը:***<br>***Մեդիագրագիտության զարգացում:***<br>***Տեղեկատվական միջավայրում սովորողների ինքնուրույնության զարգացում*** | |
| ***ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ*** | ***ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*** |
| Դպրոցն ունի թվով համակարգիչներ, տեսացրիչներ, սմարթ դասասենյակ, էլեկտրոնային գրատախտակ:<br><br>Տեխնոլոգիական նորարարությունները գրեթե ամեն օր կիրառվում են թե դպրոցի տնօրենության, թե ուսուցիչների, թե սովորողների կողմից:<br><br>Ուսուցիչներն ու սովորողները օգտվում են տարբեր էլեկտրոնային կրթական հարթակներից, տիրապետում են նաև հեռավար կրթության հարթակներին և գործիքներին:<br><br>Դպրոցն ակտիվորեն համագործակցում է Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետ :<br><br>Դպրոցում գործում է «Արմաթ» լաբորատորիան: | Համակարգիչների քանակը չի համապատասխանում մեկ դասաժամի ընթացքում դրանցից օգտվող աշակերտների թվաքանակին:<br><br>Ընդհանուր առմամբ, մեդիագրագիտությունը ցածր մակարդակի վրա է:<br><br>Բոլոր աշակերտները տանը չունեն համակարգիչներ կամ ինտերնետ: |

## Ակնկալվող արդյունքներ՝

- Նորագույն տեխնոլոգիաների շարունակական ներդրում դասապրոցեսում
- Ուսուցիչների մասնագիտական որակների, շարունակական բարելավում և արդիականացում

- Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում
- Անվտանգ համացանցի կանոնների պահպանում, վերահսկողության իրականացում տանը և դպրոցում:

# 16.ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| Առկա հիմնախնդիրներ | Հիմնախնդիրների լուծման գործողություններ | Պատասխանատուներ | Կատարման ժամանակացույց |
|---|---|---|---|
| **Մանկավարժական համակազմի գործունեության բարելավումն կատարելագործում** | 1.Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ի փոփոխություններին և դրանից բխող ծրագրային, առարկայական չափորոշիչներին և մեթոդաբանությանը:<br>2.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատանքի և անհատական ուսուցման պլանների կազմման մեթոդաբանության կիրառման և հմտությունների ձեռքբերման ուղղությամբ աշխատանքներ | Տնօրեն<br>Տնօրենի տեղակալ մ/մ նախագահներ ուսուցիչներ | **2023-2028թթ** |
| **Խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի դերի բարձրացում** | | Տնօրեն<br>Տնօրենի տեղակալ<br>Կառավարման խորհուրդ<br>Խորհրդակցական մարմիններ | **2023-2028թթ** |
| | Ակտիվացնել համագործակցությունը խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի միջև | | **2023-2028թթ** |
| **Նյութատեխնիկական բազայի հարստացում** | 1.Ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ և տեսացրիչներ, սմարթ և համակարգչային դասասենյակների համար գույք և տեխնիկա<br>2.Լաբորատորիաների համար ձեռք բերել փորձերի համար անհրաժեշտ նյութեր | Տնօրեն<br>Համակարգող | **2023-2028թթ** |

| | | | |
|---|---|---|---|
| **Բացօթյա խաղահրապարակի ստեղծում** | Դպրոցի բակի բարեկարգում Դպրոցի բյուջեից այլ ծախսերի, խնայողությունների և տնտեսումների հաշվին | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | 2023-2028թթ. |
| **Տղաների արհեստանոցի զինում** | Ձեռք բերել համապատասխան արհեստագործական հաստոցներ և գործիքներ | Տնօրեն Համակարգող | 2023-2028թթ. |
| **Դպրոցի միջանցքների ջեռուցում** | Ջեռուցման համակաչգի ընդլայնում՝ աստիճանաբար | Տնօրեն Համակարգող | 2023-2028թթ. |
| **Դասասենյակների վերանորոգում** | Կոսմետիկ վերանորոգում, լուսավորության փոխում | Տնօրեն Համակարգող | 2023-2028 |
| **Կրթության որակի բարելավում** | Աջակցել ուսուցիչներին ՀՊՉ-ի արդյունավետ իրագործման համար | Տնօրեն | 2023-2028թթ. |

# 17.ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

## ***Ուժեղ կողմերը***

Այսպիսով, ամփոփման արդյունքում դպրոցն ունի հետևյալ ուժեղ կողմերը՝

Դպրոցը կրթությունն իրականացնում է երկհարկանի շենքում, որի պայմաններն օրեցօր բարելավվում են: Առկա է կրթությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆիզիկական միջավայրը: Դպրոցը ֆինանսավորվում է պետական բյուջեից, ինչը իրականացվում է կանոնավոր և ժամանակին: Դպրոցը տարեցտարի համալրվել է երիտասարդ աշխատակիցներով: Ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգ ունեն 6 ուսուցիչ: Կամավոր ատեստացիա անցած 3 ուսուցիչ, որոնցից 1-ը ստանում է աշխատավարձի 50% չափով , իսկ 1-ը՝ 30%չափով հավելավճար : Եվս 3 ուսուցիչ հանդիսանում են վերապատրաստող ԿԳՄՄՆ-ի կողմից իրականացվող

պարտադիր ատեստավորման վերապատրաստողներ։ Պետք ՝ բարձրացնել բազմամասնագիտական խմբի աշխատանքը թե՛ չառաջադիմող, թե՛ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ։ Դպրոցն ունի 2ԿԱՊԿՈՒ սովորող։

2021-2022 ուստարում «Տարվա լավագույնները»մրցույթին ներկայացված ծրագիրը ճանաչվել է հաղթող «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում։ Դպրոցում հիմնավոր վերանորոգվել է միջոցառումների դահլիճը մարզպետարրանի կողմից։ Վերանորոգվել և բարեկարգվել է ֆիզկուլտդահլիճը։ Դպրոցում առկա է անվտանգային համակարգը։ Բակը որոշակի բարեկարգ է։ Դպրոցի միջանցքները և դասասենյակները վերանորոգված են մասնակի ։

## ***Թույլ կողմերը***

Դպրոցի դասասենյակների մեծ մասը կարիք ունեն վերանորոգման և կահավորման։ Դպրոցի բակում գտնվող տարածքները կարող են շահագործվել իբրև մարզահրապարակ և խաղահրապարակ։ Մարզադահլիճը կարիք ունի համապատասխան մարզագույքով կահավորվելու։ Համակարգիչների թիվը կարիք ունի համալրման։

Ծնողական և աշակերտական ինքնավարությունը դեռևս թույլ է։ Համայնքը դժվար է ընդգրկվում դպրոցի աշխատանքներին։ Կամավոր ատեստացիային ուսուցիչների մասնակցության ցուցանիշները դեռևս ցածր են ։ Դպրոցը ընդգրկված չէ դրամաշնորհային ծրագրերում։ Տղամարդ ուսուցիչների թիվը բավականին քիչ է։ Դպրոցի համագործակցությունը թույլ է այլ ուսումնական հաստատությունների հետ։ ԿԱՊԿՈՒ սովորողների համար դեռևս պայմանները բավարար չեն։

# 18.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է, քանի որ առանց դրանց հաշվառման ամենալավ մշակված ծրագիրն անգամ դժվար է իրականացնելը։ Դպրոցի ղեկավարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնելու այդ գործոնները չեզոքացնելու վրա՝ նպատակ հետապնդելով հնարավորինս անշեղորեն կատարել ծրագրված միջոցառումները։

| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԵՐԾՈՂՈՒԹՅԵՒՆՆԵՐ |
|---|---|
| 1.Նորամուծությունների մերժում | 1.Մանկավարժներին ընդգրկել տարբեր վերապատրաստումների՝ մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: |
| 2. Մշակութային կարծրատիպեր | 2.Պահպանելով հինը՝ ներմուծել նորը՝ կոտրելով կարծրատիպերը: |
| 3.Ծնող-աշակերտ-ուսուցիչ համագործակցության պասիվություն: | 3.Սեմինարների, քննարկումների, հանդիպումների կազմակերպում, որոնց արդյունքում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը կդառնա ավելի դյուրին: |
| 4.Մոտիվացիայի ցածր մակարդակ | 4.Խրախուսել ուսուցիչների ձեռքբերումներն ու հաջողությունները: Ստեղծելպայմաններ՝ ավելի հաճելի և արդյունավետ դասեր պատրաստելու համար: |
| 5.Ֆինանսներ | 5.Գտնել ֆինանսական աղբյուրներ |
| | |

## ***Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները***

- ✓ Ֆինանսական միջոցներ
- ✓ Նվիրատվություններ
- ✓ Դրամաշնորհներ
- ✓ Բարերարներ
- ✓ Հովանավորներ
- ✓ Ձեռարկատիրություն
- ✓ Լաբորատոր սարքավորումներ և նյութեր
- ✓ Դիդակտիկ պարագաներ
- ✓ Զարգացնող խաղեր և լրացուցիչ գրականություն
- ✓ Ժամանակակից տեխնիկա
- ✓ Տեսաղցիկներ
- ✓ Ավտոմատ զանգ

# 19.ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ

**Դպրոցավարության կարևոր ուղղությունը դպրոցի բյուջետային հնարավորություններն ու հնարավորությունների ճիշտ կառավարումն է:**

| **ՆՊԱՏԱԿԸ**<br>• Դպրոցի բյուջետային հնարավորությունների ճիշտ կառավարում | |
|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| Դպրոցի բյուջեն հնարավորություն է տալիս խնայողություններ կատարել:<br>Առաջնային հիմնախնդիրների աստիճանական լուծման համար հնարավորություններ կան և այլ ծախսերի հաշվին, և տնտեսումների հաշվին իրականացնել դպրոցին անհրաժեշտ խնդիրների լուծումը:<br>Դպրոցի ֆինանսական գործունեությունը հստակ է, համակարգված և թափանցիկ:<br><br>Դպրոցի բյուջեն հնարավոր է դարձնում բյուջեից միջոցներ հատկացնել նախատեսված գրեթե բոլոր ուղղությունների վրա: | Դպրոցի տարածքն ընդարձակ է, ինչը դժվարացնում է շենքի ջեռուցումը:<br><br>Առաջնային խնդիրները ևս լուծվում են աստիճանաբար: |

# 20.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**Զարգացման ծրագրում նախատեսված միջոցառումների բարեհաջող կատարման արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝**

1. Յուրաքանչյուր սովորողի կտրամադրվի ժամանակակից և որակյալ կրթություն
2. Կավելանա առանձին սովորողների մոտ գրանցվող հաջողությունների թիվը
3. Սովորողների բարձր ցուցանիշներ առարկայական օլիմպիադաներում
4. Կբարելավվի ուսուցիչների մասնագիտական և նախաձեռնողական որակները
5. Կձևավորվի հոգաբարձուների ու շրջանավարտների խորհուրդներ
6.Կակտիվանա համագործակցությունը խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի միջև
7. ՏՀՏ միջոցների լիարժեք ներդրում և կիրառում դասապրոցեսում
8. Նյութատեխնիկական բազայի հարստացման արդյունքում կկազմակերպվեն հետաքրքիր և արդյունավետ դասեր, և այդ կրթական միջավայրում կգերակշռի ուսուցիչների և սովորողների մոտիվացվածությունը
9. Սովորողների մոտ կզարգանան սոցիալականացման և անձի զարգացման հմտությունները՝ գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան
10. Կմեծանա դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր սովորողի և իր ընտանիքի վերաբերմունքն ու պատասխանատվության զգացումը
11.ԿԱՊԿՈՒ սովորողները հնարավորինս ներառվեն կրթության համակարգ
12. Կձևավորվի 21-րդ դարի մտածող, ստեղծագործ, կարողունակ և արժեհամակարգ կրող քաղաքացի

# 21.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Իբրև գնահատման գործիքների պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության

առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները։

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական։ Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է։ Դրան մասնակցում են վարչական ու մանկավարժական աշխատողները, սովորողները ու ծնողները։ Ներքին և արտաքին գնահատումը պետք է ուղղորդել մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը։

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն։ Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են։

**Զարգացման ծրագիրը ենթակա է լրամշակման և փոփոխման՝ ելնելով ժամանակի պահանջներից և իրավիճակներից։**

Ակնկալվում է, որ թվարկված բոլոր արդյունքները վերջնահաշվում կնպաստեն դպրոցի վարկանշային ցուցանիշի աճին՝ ապահովելով դեպի դպրոց աշակերտների ներհոսքը։